ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 30-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-8» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի մայիսի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրի 11-րդ չափաբաժնով նախատեսված 200 հատ պլաստմասե դույլերի, 13-րդ չափաբաժնով նախատեսված 350 հատ զուգարանի խոզանակների, 18-րդ չափաբաժնով նախատեսված 3000 հատ մաքրող կտորներից 1655 հատ մաքրող կտորների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի շրջանակում 19.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարվել է լրացում:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 30.01.2024Թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-8» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, 19.03.2024Թ. ԿՆՔՎԱԾ N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» «05» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Մ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Կիրակոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 30.01.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-8» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 11-րդ չափաբաժնով նախատեսված 200 հատ պլաստմասե դույլերի մասով նախատեսված 89100 (ութսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, 13-րդ չափաբաժնով նախատեսված 350 հատ զուգարանի խոզանակների մասով նախատեսված 166320 (մեկ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, 18-րդ չափաբաժնով նախատեսված 3000 հատ մաքրող կտորներից 1655 հատ մաքրող կտորների մասով նախատեսված 760638 (յոթ հարյուր վաթսուն հազար վեց հարյուր երեսունութ) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի շրջանակում 19.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարել լրացում՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Մ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Դեղատան փ.10շ, 6բն.
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02890282
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1510008305485485
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Լ. Կիրակոսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 21 » « 05 » 2024թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 1
«19» «03» 2024թ. կնքված N 1 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
11	39224331/501	Դույլ պլաստմասե			89 100	89 100	89 100	89 100	89 100	89 100	89 100	**89 100**	
13	39221480/501	Զուգարանի խոզանակներ			166 320	166 320	166 320	166 320	166 320	166 320	166 320	**166 320**	
18	39522330/3	Մաքրող կտորներ	618 162	618 162	1 378 800	1 378 800	1 378 800	1 378 800	1 378 800	1 378 800	1 378 800	**1 378 800**	

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Մ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դեղատան փ.10շ, 6բն.
ՀՎՀՀ՝ 02890282
Հ/Հ՝ 1510008305485485
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Լ. Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ